քատ հիւանդաց ազգիս, որդեամբք հոգելոյս Ընկցի սարաֆ մահտեսի Եղիազար ամիրային վասն հոգւոյ իւր և ծնողացն բարեջան աշխատութեամբ նորին քեռորդւոյ գերագնիւ մահտեսի Ալեքսան և մահտեսի Յակոբ աղայից յամի 1828, յԱռաջնորդութեան Տեառն Կիրակոսի Արքեպիսկոպոսի,,:

(Ի յետոյ)·

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ·

---

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ

# ՖԱԹ ԱԼԻ ՇԱՀԻ ՎԵՐԱՅ

(Շարունակութիւն)

---

ԼԵ. Ֆառռուխ Սուլթան խանում, համամայր Շափուր միրզին, կին Փէշխըրդմաթ — բաշի միրզայ Կուլամ Շահի, որ եղած է Միր Արդլ — կասում Ֆինդըրսկիի սերունդէն։ Գնաց Մէքքէ ուխտ, ծնաւ վեց զաւակներ, չորսը դուստրներ և երկուսը որդիներ, էին առաջինն՝ Միրզայ Աբուլ Կասում և 2, Սեիդ Հիւսէյն միրզայ անուն։

ԼԶ. Մահ — նուշ — լէք խանում, կին Ամիր դիվան Միրզայ Նէբի խանի (*) Կազվինցւոյ, ծնաւ մին դուստր և մին որդի Դարաբ միրզա անուն։

ԼԷ. Հուբբ — Նաբաթ խանում, համամայր Մահամմէդ Մէհթի միրզին, ամուսնացաւ Ֆաթ — Ալի շահի եղբօր որդի միրզայ Ահմէդ խանի հետ, երբ սա ապահարզան տուեց, ամուսնացաւ Ֆախրուլ դովլէի (տես դուստրների ցուցակումն հ. 6) հետ և ծնաւ մին դուստր։

ԼԸ. Շահ — Փաշայ խանում, համամայր վերնոյն, գնաց Մէքքէ և ամուսնացաւ Վարացի Զօհրաբ խան շահի գանձապետի հետ, երկու որդիք ծնան. առաջինն Արի կլի (*) խան, մականուանեալն Վալի: 2, Մահամմէդ Ալի խան։

ԼԹ. Ֆարզանէ — Բէգում, ևս համամայր վերնոյն, ամուսին Մայիր ուլ մըմալէք Հիւսէյն — Ալի խան գանձապետի Շահին, ծնաւ մին դուստր։

Խ. Մէհրի Ջահան խանում, համամայր վերնոյն, ամուսնացաւ Հազար — Ջրիբցի Կասում խանի որդի Զէյնալաբդին խանի հետ՝ որ Ֆաթ — Ալի շահի մահուանէն յետոյ Կուլար աղասի եղաւ։

ԽԱ. Սուլթան խանում, համամայր Մէլիք Իրաջ միրզին, ամուսին Գուլարու Մահամմէդ Բաղր խանի, Թէհրանի Բեգլարբէկիի՝ ծնաւ մին դուստր։

ԽԲ. Խավար — Սուլթան բէգում, համամայր Ալի կուլի միրզին՝ զկնի մահուան հօրն ամուսնացաւ Կազվինցի միրզայ Նազար — Ալի հէքիմ — բաշւոյ (բըժշկապետի) հետ, ծնաւ մին որդի Միրզայ Մահամմէդ խան անուն։

ԽԳ. Բօխտար — Բէգում, շահի մահուանէն յետոյ ամուսնացաւ Իրևանցի Իմիր Թուման Մահամմէդ խանի հետ. սրանէ բաժանվելէն յետոյ, ամուսնացաւ

---

(*) Սայր Ազամ միրզայ Հիւսէյն խան միրզայ Նէբի խանի որդին՝ է ուրիշ ամուսնութենէ և ամուսնացած է ընդ միւս քվորն տիկինի եւ այս ինքն Մահ Թաբան խանումի հետ։ Տես զկնի կանանց շարքումն հմ. 23։

(*) Այժմեան Հերակլ. Վրաստանի վերջին թագաւորի անունով կոչուած։

Մակուեցի Մահամմեդ Ալի խանի հետ, և յետոյ Կուանլու Ամիր — Ասլան խանի հետ։ Մահամմեդ խանէն ծնաւ մին դուստր։

ԽԴ. Խուռռամ — Բահար խանում, համամայր Բեհամբան միրզին։

ԽԵ. Բէգում — Արմ խանում, համամայր վերնոյն։

ԽԶ. Մահ Թաբան խանում, համամայր Միրզա Նաբի խանի կնոջ հետ։

ԽԷ. Մելիք — զադէ խանում։

ԽԸ. Բէգը — ջհան խանում՝ մականուանեալն Մահի — բաջի, համամայր Եահեան միրզին։

## Ա. Ֆաթ Ալի Շահի կանանց անուաննե-րը՝ որոնք երեւելի տոհմերէ էին (1)։

Ա. Ասիէ խանում, դուստր Գուլուի կաձար Ֆաթ — Ալի խանի, մայրն Աբբաս միրզայ Թագաժառանգի, Զիլլը — Սուլթանի և Գեօհար — Մելիք խանումի, և երկու զաւակներն էլ մեռած են։ Այդ Մահամմեդ խան, որ Շահ անուանուեցաւ, ինքն ընտրեց էն ամուսինը Ֆաթ — Ալի շահի համար (2)։ Նա Թագուհին մեռաւ 1220 հիջրի և նրա մարմինն զըրկեցին Քեար — բալայ Թաղեն։

Բ. Միւս Ասիէ խանում, սա էր դուստրը Մահամմեդ խան կաձարի, քոյր նըզամ ուլ դովլէ Սուլէյման խան Կուվանլուի. նախ ամուսնացած էր Ֆաթ — Ալի շահի հօր եղբայր Մեհթի — կուլի խանի հետ, որից և ծնած էր Իբրահիմ խան Զահիր ուլ դովլէ, յետոյ ամուսնացաւ Ֆաթ — Ալի շահի հետ, որից ծնաւ Մահամմեդ — Կուլի միրզայ մականուանեալն Մուլք Արա։ Խադիջէ խանումը և Զէյնաբ խանումը և երկու զաւակներն էլ մեռան և ինքն Մազանդարան վախճանուեցաւ։

Գ. Խէյրուլ Նսայ խանում, էր դուստրը շահի հօր եղբայր Մուրթուզայ — Կուլի խանի, որ փախաւ Ռուսաստան։ Ծնաւ Հէյդար — Կուլի միրզին և երկու զաւակներ. վերջիններն մեռան, ինքն իւր որդւոյ հետ գնաց Գօլ — Փէյլիքան, ուր և մեռաւ։

Դ. Մարեամ — Բէգում խանում, դուստր Շըխ — Ալի խան Զէնդի, մայր Շըխ — Ալի միրզի. երկու ուրիշ զաւակներն ևս մեռած են. որդւոյ հետ գնաց Մելայիր և էնտեղից Մեքքէ, ուստի վերադարձաւ ու մեռաւ։

Վերոյիշեալ չորս կնանիքն էին օրինաւորները, այս ինքն համեմատ Կուրանի.

---

(1) Կաջարիէ պատմութեան հեղինակն բաժանելով Ֆաթ — ալի Շահի կնանիքը չորս դասակարգեր, ասում է՝ « չէ զարմանալի. եթէ ոք ճշդութիւնով համարէ Ֆաթ — Ալի շահի կնանըքոնց անուններն՝ հասնի ցհազար հոգի, բայց ես աշխատել եմ ժողովել հիմնաւոր ապացուցութիւններով միայն նրանց անուններն՝ որոնք տոհմով, աստիճանով, ձիրքով կամ զաւակներով յայտնի են եղած պալատի մէջին, իսկ միւսները զանց եմ արած »։

(2) Պարոն Բէրժիէն իւր յօդուածի ծանօթութեան մէջին (երես 40) սխալմամբ է գրում թէ «ժառանգն Ֆաթ — Ալի Շահի Մահամմեդ Միրզէն ամուսնացաւ սրա դստեր վերայ՝ եւ ամուսնութենէն ծնաւ Աբբաս միրզէն, փոխանակ տեղը ժառանգն Ֆաթ — ալի Շահի Աբբաս միրզէն ամուսնացաւ սրա դստեր վերայ, եւ ամուսնութիւնէն ծնաւ Մամադ միրզէն որ յետոյ Շահ եղաւ »։

չորս միայն ժէ–քէնով կնիկներ կարող է իւրաքանչիւր Մուսլման ունենալ, իսկ մընացեալն, որքան և կամենայ՝ ուզէ ատացեալն կարող է ունենալ, թէ և որպէս առաջիններէն, նոյնպէս և յետիններէն ծընած զաւակները բոլորեքեան էլ հարազատներ են, բայց պատուին, աստիճանին վերաբերեալ՝ ժողովուրդի մէջին ունին զանազանութիւն։

Ե. Բըդար — Նըսայ խանում, դուստըր հօր եղբօր շահի Հաջի Մուստաֆայ — Կուլի խանի, ծնաւ մին որդի։ Այս կինըն էնքան սաստիկ բարկացող բնութիւն ունէր, որ չկարողացաւ միւս կանանց հետ կանանոցի մէջին համաձայն կենալ, վասն որոյ և շահն նրան ապահարզան տուեց ու արտաքսեց կնանոցէն, նա էլ գնաց Մէքքէ, վերադարձաւ Թէհրան, առ ժամանակ կացաւ, մեռաւ, մարմինն ուղարկեցին Քէարբալայ։

Զ. Խադիջէ խանում, դուստր Լուլի Կաճար Մահամմեդ խան Եզզըդդինի, մի զաւակ ծնաւ, որ շուտով մեռաւ։ — Այս կինը Սարդվարցի ազախին ունէր, որ խնդրեց իւր տիկինէն արձակուրդ տալ իւրեան, գնալ ամուսնանալ, բայց երբ տիկինն չընդունեց նրա խնդիրքն, վասնորոյ և նա մահադեղով սպանեց իւր տիկնոջն։ Այս անցքըն կանանոցումն մինը լուր տուեց շահին, որ հրամայեց ազախնին դրին Զէմբէրէկ ասացեալ թնդանօթի մէջը, ձգեցին և չարաչար սպանեցին։

Է. Գեօհար — Թաջ խանում, դուստըր Դոլուլի միրզայ Մահամմեդ խանի, որ էր Թէհրան բէգլէրբէկի։ Երիտասարդութեան հասակում մեռաւ և թողեց մին դուստր՝ Գեօհար խանում անուն, որ եղաւ ամուսին Ռոստոմ խանի որդւոյ Իբրահիմ խանի Զահիր ուլ դովլէի։

Ը. Մէլիք — Սուլթան խանում՝ դուստըր Դոլուի Կաճար Իբրահիմ խանի, ծնաւ մին դուստր ու մեռաւ։

Թ. Սուլթան խանում, դուստր Դուլուի Կաճար Ալլահ — Կուլի խանի, մայր Աման ուլլահ միրզի։

Ժ. Բէդր — Ջահան խանում, դուստր Արաբ Մահամմեդ — Ջաֆէր խանի կուսակալի Բասթամի, մայր Ֆարման — Ֆարմա Հիւսէյն — Ալի միրզի և Սուջա ուլ Սալթանի. և երեք դուստրներ էլ ծնած ու մեռած են։

ԺԱ. Խէյր ուլ Նըսա խանում, դուստր Աֆշար Ղահրուլի շահի. երբ Աղա Մահամմեդ խանը կամ Ղահր Խօրասանը առաւ, նրան ամուսնացրեց Ֆաթ — Ալի շահի հետ, նրանէ ծնաւ մի զաւակ ու մեռաւ։

ԺԲ. Աղայ — Բէգում, յայտնի տիտղոսովն Աղայ — բաջի, դուստր Իբրահիմ — Խալիլ խան ջուանշիրի, որ (հաքիմ) կառավարիչ էր Կարաբաղի։ Երբ Ֆաթ — Ալի շահի երկրորդ կինը՝ որ էր մայր Մուլք — Արայի՝ վախճանուեցաւ, ամուսնացաւ էս տիկնոջ հետ այս ինքն Աղա — Բէգումի հետ. և սա զաւակ չծնեց. մեռաւ 1248 հիջրին ուխտատեղի Կում քաղաքումն և էնտեղ էլ թաղուեցաւ։

ԺԳ. Բէգում խանում դուստր Շակակի Սադղ խանի, մի զաւակ ծնեց ու մեռաւ։

ԺԴ. Թարլան խանում դուստր Կալիջէ Ալլահեար խանի, անզաւակ մնաց։

ԺԵ. Բէգում խանում, դուստր Աֆշար Իմամ — Կուլի խանի, մայր Մէլիք —

Կասում միրզի և Մելիք — Մանսուր միրզի բաց ի սրանցից երկու զաւակներ ևս ծնած է ու մեռած են։

ԺԶ. Կամար — Նըսա — Բէգում, դուստր Հիւսէյն — Կուլի խանի որդւոյ Իմամ — Կուլի Աֆշարի, մայր Նաճեաճ միրզի, Ջահանսուզ միրզի, Սարա — Սուլթան, Կեյսար և Բադր — Ջահան խանումների, մի զաւակն էլ մեռած է։

ԺԷ. Զէյնաբ խանում դուստր Մուկադդէմ Ահմէդ խանի, որ Մարաղայի Բէկլարբէգի էր. անզաւակ մնաց։

ԺԸ. Խանում — Բուզըրք, դուստր Մահամմէդ Թաղի խանի, թոռնի երևելի Զէնդ Քեարիմ խանի։

ԺԹ. Մարեամ Բէգում խանում, դուստր Զէնդ Ջաֆէր խանի, անզաւակ մնաց։

Ի. Աղայ Բէգում, դուստր երևելի Զէնդ Սէիդ Մուրադ խանի, անզաւա կմնաց։

ԻԱ. Խաթուն — Ջան խանում, դուստր Զէնդ Ալի խանի, մայր Շահ — Կուլի միրզի և մին զաւակն էլ մեռել է. Մէքքէ գնաց։

ԻԲ. Խէյր ուլ Նըսա խանում դուստր Փազուկլի Մաջնուն խանի. ծնաւ մին դուստր Խաթիջէ Սուլթան — Բէգում խանում անուն, որ ամուսնացաւ Իբրահիմ խան Նազըրի հետ։

ԻԳ. Նուշ — Աֆէրին խանում, դուստր Զէնդ Բադր խանի, ծնաւ երկու դուստրներ՝ Մահ — Նուշ — Լէբ խանում և Մահ Թաբան խանում, որոնց առաջինն ամուսնացաւ միրզայ Նէբի խանի հետ և երկրորդն Ֆաթալի շահի մահուանէն յետոյ՝ նրա որդի այժմեան Սադր Աղէմ միրզայ Հիւսէյն խանի հետ։

ԻԴ. Մէհր — Նըսա խանում, քոյր Գումրուլի Կուրի սա դէլ բաշի Մահմադ խանի։ Նա՝ նշանուած էր կուանլու Էմիր Սուլէյման խանի հետ, յետոյ ամուսնացաւ Ֆաթ — Ալի շահի հետ, որից ծնաւ երկու զաւակներ՝ բայց մեռան, երկու անգամ գնաց Մէքքէ։

ԻԵ. Խանում — Ջան խանում դուստր Մահամմէդ — Ալի խանի որդւոյ Զէնդ Քեարիմ խանի, անզաւակ էր։

ԻԶ. Խանում Ջանի խանում, դուստր Իբրահիմ խան Թալիշի, երկու զաւակներ ծնան ու մեռան։

ԻԷ. Աղայ — Բէգում խանում, որի ծնունդ հասցնումն ցհարստութիւնն Սաֆավիէ, անզաւակ էր։

ԻԸ. Նըսա — բաջի խանում, Թալիշների երևելի տոհմէն է, որ ծնաւ մին դուստր Գեօհար Շադ խանում անուն, որ ամուսնացաւ Գուլուբի Կաճար Ալի — Մահամմէդ խանի հետ։

ԻԹ. Շահ — Գեօհար խանում, դուստր Զէնդ Նադր — Կուլի խանի, անզաւակ էր։

Լ. Նաբաթ խանում, դուստր Կաջար Թաղի խանի, անզաւակ էր։

ԼԱ. Գեօհար խանում, դուստր Ֆաթ — Ալի խանի, որդւոյ Բդայ — Կուլի խանի, հօր եղբօրն Ֆաթ — Ալի շահի, անզաւակ էր։

ԼԲ. Գեօհար խանում, դուստր Մանքուլի խան — Բաբայ խանի, անզաւակ էր։

Ի․ Փառ — ալէ Շահէ էն Կանանց անունները, որոնք նրա մահուան ժամանակն պատարնէր և որբէնէր անէին և նրանցով եղէ — ելէք եղան։

ԼԳ․ Զիրա — Զօհր խանում, Վրաստանի կողմէն էր *). Մահամմեդ — Ալի միրզէն և Ռւմմ Սալանէ խանումն ծնած են սրանէ և մին զաւակ էլ մնացած է։

ԼԴ․ Բիբի — քուչըք խանում, քոյր Սադկ խանի Բուրջուրդցւոյ, մայրն է Մէհէմմեդ — Վալի միրզի և Մարիամ խանումի։

ԼԵ․ Զէյնաբ խանում, քոյր Բախտիարի Ալի խանի, մայր Մահամմեդ Թաղի միրզի և Մարիամ խանումի, և երկու զաւակներ էլ մնացած են։

ԼԶ․ Բէգում — ջան խանում՝ դուստր Հաջի Սադկի Կազվինցւոյ, մայր Բուքն ու դովլէի, Իմամ — վիրդի միրզի և Սուլթան Իբրահիմ միրզի, մին որդին էլ մնացած է։

ԼԷ․ Գիլում խանում, Փէզվարի Սէիդներէն է, սրանէ ծնաւ Աբդուլլահ միրզէն։

ԼԸ․ Մարիամ խանում, մայր Մահամմեդ միրզի, Ալի բղայ միրզի, և երեքն էլ մնացած են։

ԼԹ․ Մարիամ խանում, Իսրայէլուհի, մայր Մահմուդ միրզի, Հմայուն միրզի, Ահմեդ — Ալի միրզի, Ջ․հանշահ միրզի և դուստրների Զիաուլ Սալթանէի, Սուլթան Բէգում խանումի, հինգ զաւակներն էլ մնացած են։

Խ․ Փաթմէ խանում, երևելի մականունով Սինբիուլ բաջի, է քոյր Գիրմանցի Բահմարի Ալլահքյար խանի, ծնած է Շուա — ուլ Սալթանէ ու դուստրները Փաթ ու դովլէ, Վալիէ և Թաջլի Բէգում խանումները։

ԽԱ․ Գիուլ — բադան խանում *), մականունեալն Խազնէ ու դովլէ, Վրաստանի կողմերէն էր, ծնած էր Բըհաուլ դովլէ և Սէիֆ — ուլլահ միրզէն, մին զաւակն էլ մնացած է. իւր կնիքի ական վերա քանդակել էր տուած, Մօհթէբէր դէր մըմալէքը իրան, Կարզ Սանդուխտար շահ Ջ․հան, այս ինքն յարգ ունեցող Իրանի աշխարքումը, ձեռագիր գանձապետի աշխարհի շահինը։ Պալատի մէջն նախ Սանդուխտար այս ինքն գանձապետ տիտղոսն կկրէր, և յետոյ Խազնէ ուդովլէ այս ինքն գանձ տէրութեան տիտղոսն ստացաւ։ Որքան որ Փաթ — Ալի Շահն գոհարեղէն, ամենաթանգագին քարեր, ոսկի, արծաթ, կամ կտոր կտոր ոսկիք, մինայ արած գործիք, դիբակ հագուստներ ունէր, միանգամայն ասած ամենայն հազուագիւտ բաներն յանձնուած էին նրան, և երբէք նըրանէ հաշիւ չէին պահանջել, և ամենայն էս վերոյ յիշեալ բաների տեղերը էնպէս տեղեակ էր, որ այն ինչ Շահն կէս գիշեր, երբ և լինէր, մին ամենափոքր բան ուզէր, առանց ճրագի շատ անգամ ձեռն

---

(*) Սա էր Կախէթեցի Թաւադի ցեղէ որպէս նորա թոռն կպատմէր։ Երբ Վրաստանի կողմէն մին թագուհու համար յիշվումէ, պէտք է իմացած որ չեն իմանում Հայ թէ Վրացի լինելն, ըստ որում գերի ընկածն երեխայ լինելով չեն իմանում ինչ ազգէ իւր ծնողքն էին, ինչպէս և վերև յիշած եմ։

(*) Սա էր Թիֆլիզեցի Հայուհի Միրմանենց տոհմէն։

կտանէր, առանց որոնելոյ, կգտնէր կմատուցանէր Շահին։ Շահի մահուանէն յետոյ գնաց Մէքքէ ուխտ։

ԽԲ. Թաւուզ խանում Իսպահանցի մականուանեալն Թաջ ու դովլէ այս ինքն թագ տէրութեան, մայրն Սէիֆ ու դովլէի, Նէիր ու դովլէի, Ազուլ դովլէի որդիների և Շիրին ջհան խանումի, Շէմս ու դովլէի և Մուբասսա խանումի. երեք միւս զաւակներ ևս մեռած են։ Այն ինչ էս տիկինը մտաւ կանանոցն, իսկ և իսկ շահն էնքան սիրէց նրան որ, հրամայից կանանոցումըն ամենայն տիկինների գլխաւորն լինի, և որքան թանգագին գոհարներ, ակներ, ոսկեղէն, զարդեր կամենայ, տան նրան, կրէ իւր վրայ։ Շահի մահուանէն յետոյ իւր կնիքի վրայ փորագրել տուեց էս «խաքը կամ ըխլթ ֆէլէք բէրսար թաջ, այս ինքն աշխարհն հող ու տրամութիւն սփռեց թագի վրայ», ըստ որում իւր մականունն էր թագ կամ թաջ։

ԽԳ. Բանէֆշէ խանում Հայուհի, Ատրպատականէն *), մայր Ալլահվերդի միրզի։

ԽԴ. Շահ—մուշտարի բաջի Շիրազցի էր, երգելոյ արհեստի մէջէն կատարեալ էր։ Մայր Մահամմեդ Մեհդի, Մահամադ—Ալին և Մահամմեդ Հադի միրզաների և Նաբբի—Նաբաթ, Փալայ—խանումի, Մէհր ջհան և Ֆալըզանէ խանումների և հինգ ուրիշ զաւակներն ևս մեռած են։

ԽԵ. Օվէյիսա խանում, Թուրքմանուհի, մայր Իսմայիլ միրզի, որ հրամանատար էր Բասթամի։

(*) Սարաջեան տոհմէն Թիֆլիզեցի։

ԽԶ. Փէրի—Շահ խանում 1), Վրաստանի կողմէն, մայր Կէյումարս միրզի, երկու զաւակներն էլ մեռան. շատ բարեպաշտ էր էս տիկինն և վատ բանից խոկող. Շահի մեռնելէն յետոյ գնաց Մէքքէ ուխտ և մականուանեցաւ Հաջի—Շահ։

ԽԷ. Շահ—Փէրի խանում 2), մականուանեալն Սարդար, Հայուհի. սորա նուագելն և զարմանալի քաղցր ձէն ունենալն շատ հռչակուած էր։ Մէլիք—Իյըրջ և Սուլթան—Մուստաֆայ միրզաների և Ջհան Սուլթան խանումի մայրն էր։

ԽԸ. Շահ—Փէսէնդ խանում Շիրազցի, սա ևս նուագելումն գերազանց էր, մայրն Կէյկուբաթ, Կէյ—քեավուս, Կէյ—խօսրով միրզաների, մին զաւակն էլ մեռած էր։

ԽԹ. Սաքինէ խանում Սպահանցի, մայր Բէհրամ և Հըրմզ միրզաների, մին զաւակ էլ մեռած է։

Ծ. Ջէյրան խանում Գուզլան Թուրքման ցեղէն, մայր Սուլէյման և Սուլթան Սալիմ միրզաների։

ԾԱ. Աթարէ խանում Իսպահանցի, մայր Մանուչէհր միրզի։

ԾԲ. Գուլ—Փիրհան խանում Վրաստանի կողմէն 3), մայր Ալի կուլի, Աբ-

(1) Մարաղեցի Արզումանի դուստրն։

(2) Սա էր Երևանցի Կոնդի թաղէն, հայրը քահանայ։ Էս բամբիշը լաւ կըհեծնէր երիվարի վրայ, հրացան և տորձանակ կձգէր, թուր կխաղացնէր նժոյգը վազելոյ ժամանակն, վասնորոյ և անուանուեցաւ Սարդար, այս ինքն սպարապետ՝ զօրավար կամ կուսակալ ելն։

(3) Շուլավերցի էր, քահանայի դուստր։

բաս կուլի և Նուր ուլ դէհր միրզաների և Խավէր Սուլթան խանումի:

ԾԳ. Զիբա — Զէհրա խանում, քոյր Աուշարի Շիր — քուհիցի Նասիր խանի, մայր Շափուր միրզի և Փարի — Սուլթան խանումի. երկու որդիններն էլ մեռած են:

ԾԴ. Նէնէ խանում, քոյր Փէզվարի Մահամմեդ — Մէհթի խանի, որի ախա-ղոսնէր Շէհնէ այս ինքն բանաստեղծ, ծը-նաւ Թէյկուն խանումը և Իզզաթ — Նըսա խանումը, և գնաց Մէքքէ ուխտ:

ԾԵ. Բիբի խանում, դուստր Բալ-Փրուչի Հաջի Իւսուֆ խանի, մայր Շահ — Սուլթան խանումի:

ԾԶ. Հաջի է — խաթուն խանում, դուստր Իսպահանցի Լութֆ — Ալի բէկի, մայր Շէմս Բանու խանումի:

ԾԷ. Խօշ — Նմա խանում, Վրաս-տանի կողմէն, մայր Մահ Բէգում խա-նումի:

ԾԸ. Փաթի խանում Շիրազցի, մայր Սարվ — ջհան խանումի:

ԾԹ. Խէյր — Նըսա խանում Բալ-բասուհի, մայր Շահ — Ջհան խանումի մականուանելոյ խան Բիբի:

Կ. Նէնէ խանում մականուանեալ Մէհդուլիա՝ քոյր մոլլայ Աբդուլլի, Մա-զանդարանի Սար ռեղիցն, մայր Քեամ-րան Միրզի և Օվրանկ — Զիբ միրզի, և Բէգմ — Արա խանումի, Խօռռամ — Բը-հար խանումի, մին զաւակն էլ մեռել է:

ԿԱ. Հումա — խանում, Ջհանբէկ-լու Քուրդ ցեղէն, մայր Ջէլալէդդին միրզի:

ԿԲ. Բէգում խանում, դուստր Թէհ-րանի մօտիկ Թէջրիշ գեղացի Հաջի Ի-լիասի, մայր Փէրվիզ միրզի, երկու զա-ւակներն էլ մեռած են:

ԿԳ. Մահ — Աֆէրին խանում, դուս-տըր Շիրազցի Գուլ — Մահամմեդ խա-նի, մայր Զըհրէյդա խանումի:

ԿԴ. Շահ — Փըրազ խանում, Քէր բդ Բալբաս ցեղէն, մայր Ագայ Բէգումի:

ԿԵ. Գուլի խանում, հաչակեալ տխա-ղոսով Աղադիօղ, Կարաբաղցի, մայր Սուլթան Հիւսէյն միրզի:

ԿԶ. Մալաք — Ջհան խանում, Շի-րազցի, մայր Բօխարէ Բէգում խանումի:

ԿԷ. Շահրազ խանում, Կազվինցի, մայր Մովլուդ — Սուլթան խանումի:

ԿԸ. Աղադիօղ խանում, Բասթամցի, մայր Սհար — կրան միրզայի:

ԿԹ. Շահր — Բանում խանում, Խու-դարանդլու ցեղէն, մայր Ալիէ — Սուլթան խանումի:

(Ի յետոյ)

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ

---

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՓՈՒՆՋՔ Ի ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

(Շարունակութիւն)

### Յաղագս Երկրի.

Երկիրն ունի զձեւ բոլորակ, ուստի եւ անուանի Երկրագունտն:

Երկիրն անհասանելի արագութեամբ յընթացս քսան եւ չորս ժամուց շուրջ անելով, զծագումն եւ զմուտ արեգական ոչ թողու երեւելի